

\_\_\_\_\_ (Ընկերության անուն)

Տնօրեն \_\_\_\_\_

Նույն ընկերության աշխատակցի

\_\_\_\_\_ (ա·ա·հ·)

Հասցե՝ \_\_\_\_\_

## ԴԻՄՈՒՄ

Հարգելի \_\_\_\_\_

ՀՀ Սահմանադրական դատարանը սույն թվականի ապրիլի 2-ին, քննության առնելով ՀՀ ԱԺ պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45 և 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ գործով դիմումը, իր որոշման 1-5-րդ կետերով որոշել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածի 6-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին մասը, 76-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Թեև, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 02.04.2014թ ՍԴՈ-1142 **որոշման 7-րդ կետով՝** ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 30.09.2014թ, սակայն **որոշման 6-րդ կետով՝** ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը, համաձայն որի՝ այդ դրույթներով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:

ՄԴՈ-1142 որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

**Որոշման եզրափակիչ մասի 6-րդ կետի համաձայն՝ մարդու կամքին հակառակ չեն կարող նրա սեփականությունը հանդիսացող աշխատավարձից գանձումներ կատարվել, այն ուժի մեջ է մտել հրապարակման պահից** (որոշման եզրափակիչ մասը՝ <http://concourt.am/>):

Սեփականությանս իրավունքը երևակայական՝ պատրանքային իրավունք չէ, այլ՝ իրական, շոշափելի իրավունք է, և այն անմիջականորեն գործող իրավունք է. ուստի՝ չեմ տալիս իմ համաձայնությունը՝ իմ աշխատավարձից կուտակային կենսաթոշակի պարտադիր վճարումներ հաշվարկելու և փոխանցելու վերաբերյալ ու խնդրում եմ առաջնորդվել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրական դատարանի սույն ՄԴՈ-1142 6-րդ կետի պահանջներով, որպես անմիջական գործող նորմեր, ձեռնպահ մնալ իմ աշխատավարձից կուտակային կենսաթոշակի պարտադիր վճարումներ հաշվարկելուց և փոխանցելուց:

Իսկ հայեցողական լիազորություններից օգտվելուց առաջ, խնդրում եմ առաջնորդվել բացառապես **ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված** մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության և/կամ վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ձեռնպահ մնալ իմ, որպես Կազմակերպության/ընկերության աշխատողի, աշխատավարձից կուտակային կենսաթոշակի պարտադիր վճարումներ հաշվարկելուց և փոխանցելուց՝ քանի դեռ դրա վերաբերյալ չունեք իմ գրավոր համաձայնությունը:

Հարգանքով՝

---

*(Անուն ազգանուն/ ստորագրությունը)*

« » *ապրիլի 2014թ.*

Հ.Գ. Սույն դիմումիս պահանջը հաշվի չառնելու դեպքում, ձեռնամուխ եմ լինելու իրավունքներիս պաշտպանությանը, իրավունքներիս պաշտպանության եղանակի ընտրության հարցը՝ համաձայնացնելու եմ կուտակային կենսաթոշակների պարտադիր բաղադրատարի դեմ պայքարող քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ: